թիւը վարեց վերատեսչի պաշտօն՝ ժառանգաւորաց դպրոցում։ 1863 թուի Յուլիսի 17-ից մինչև 1865ը վարեց Մայր Աթոռոյս Աւագ լուսարարութեան պաշտօնը։ 1864 թուի Մայիսի 25 ին առաջարկութեամբ Հանդուցեալ Մատթէոս Կաթուղիկոսի արձակուեց Սինոդի անդամութիւնից և 1865 թուի Նոյեմբ. 22 ին միջնորդութեամբ Տեղակալի Ատենապետի Սինոդի, բարձրագոյն հաճութեամբ՝ նշանակուեց ժամանակաւոր Կառավարիչ Բեսարաբիոյ և Նոր Նախիջևանայ թեմի։ 1868 թուին արձակուելով յիշեալ պաշտօնից վերադարձաւ Ս. Էջմիածին և տնօրէնութեամբ Հանդ. Գէորգ Կաթուղիկոսի 1873 թուից մինչև 1881 թիւը վարեց Երևանայ թեմի Փոխանորդութեան պաշտօնը։

Միաբանութիւնս խորին տխրութեամբ յանձնելով հողին իւր բաղմամեայ միաբանակցի և արդիւնաւոր պաշտօնէի երկրաւոր նշխարը՝ աղօթումէ առ Աստուած լուսաւորել Հանդուցելոյ հոգին իւր սրբերի և արդարների հետ դասաւորելով։

---

Նադվօրնի Սօվետնիկ ՍՈՒՔԻԱՍ ՍՏԵՓԱՆՆՈՍԵԱՆ ԹԱՂԻԱՆՈՍԵԱՆՑ Ատենադպիր Սինոդի Մայր Աթոռոյս 58 տարեկան հասակում կնքեց իւր մահկանացու կեանքը Երևանում Մարտ ամսոյս 9 ին երեկոյեան 11 ժամին՝ կարճատև հիւանդութիւնից յետոյ։ Եւ ամսոյս 11 ին, կիւրակէ օրը, տեղւոյն հասարակաց Հանգըստարանում թաղուեց։ Թաղման հանդիսին ներկայ էին ըստ կարգադրութեան Հոգևոր Իշխանութեան՝ երկու Եպիսկոպոս և երկու Վարդապետ։

Հանդուցեալը 1842 թուին աւարտելով ուսման ընթացքը Երևանու Հոգևոր դպրոցում՝ 1845 թուին Փետր. 5 ին մտաւ ծառայութիւն Ս. Էջմիածնայ Սինոդը։ 1846 թուի Սեպտ. 19 նշանակուեց կարգապահ մատենավար և նոյն թուի Հոկտ. 16 ին օգնական ատենադպրի։ 1856 թ. Նոյեմբ. 15 ին մասնակցեց քննութեանը Ալէքսանդրապոլի վիճակի Եկեղեց. գործերի և Հոգ. Կառավարութեան վերայ, օրինակելի ջերմեռանդութեամբ։ 1857 թուին ըստ հաճութեան բարեյիշատակ Ներսէս Ե. Կաթուղիկոսի՝ նշանակուեց Ատենադպիր Սինոդի։ 1859 թուին Հոկտ. 5 ին և 1861 թ. Ապրիլի 19 ըստ տնօրէնութեան Հանդ. Մատթէոս կաթուղիկոսի՝ մասնակցեց Թիֆլիզու Ներսիսեան Հոգ. դպրանոցի գործերը կարգի դնելուն։ 1870 թուին Նոյեմբ. 20 ին ըստ իւր հրաժարականի արձակուելով Սինոդի Ատենադպրութեան պաշ-

տօնից ստանձնեց Վաղարշապատում, Գաւառապետի մօտ, ամբանոց գնացող թափառական քուրդերի վերահսկողի պաշտօնը։ 1871 թուին Ապրիլի 4ին ըստ ցանկութեան Հանգ. Գէորգ Կաթուղիկոսի առ Երևանու Նահանգապետը, նորից ստանձնեց Սինոդի Ատենադպրութեան պաշտօնը։ 1876 թ. մասնակցեցեց քննութեանը Շուշիի թեմ. և դպրոցական գործերի։ Սինոդի Պրոկուրորի բացակայութեան ժամանակ քանիցս վարել է նոյն պաշտօնը։ Եւ յընթացս իւր ջերմեռանդն պաշտօնավարութեան ստացել է հետևեալ շքանշանները. Ս. Աննայի՝ 2 և 3 աստիճանի, Ս. Ստանիսլաւի՝ 2 աստիճանի արքունական թագով. և Պարսից թագաւորութեան՝ Առիւծի և Արեգական շքանշանը 2 կարգի՝ աստղով և 3 կարգի։

Իւր քաղցր բնաւորութեամբ սիրելի էր իւր ծանօթներին և ջերմեռանդն պաշտօնավարութեամբ՝ իւր իշխանաւորներին, որոնք երկար ժամանակ անմոռաց կըպահեն Սուքիաս Թաղիանոսեանի յիշատակը։

Լուսաւորեսցէ Տէր Հանգուցելոյ հոգին և իւր սուրբ տեսութեան արժանացուսցէ, մխիթարելով Հանգուցելոյ սգավորաց ընտանիքը և վշտագնեալ բարեկամներն ու ծանօթներ